

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՉԱՅԵՐԵՆԻ „ԲՆԱԿԱՎԱՅՐ,, ԻՄԱՍՍ
ԱՐՏԱՉԱՅՏՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
, ՉԻՄԼԱՏԻՊԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իմաստային հիմնատիպերի ուսումնասիրության մեջ առանձնահատուկ դեր ունի Է. Ռոշի տեսությունը: 1975թ.-ին իր «*Իմաստային կարգերի ճանաչողական վերլուծություն*» աշխատության մեջ¹ (Cognitive Representation of Semantic Categories) նա քոլեջի 200 ամերիկացի ուսանողներին առաջարկեց *կահույք* կարգի ցայտուն ներկայացուցիչները տեղադրել ռեյտինգային սանդղակի 1-ից 7 աստիճաններին: Ըստ Է. Ռոշի՝ կարգի լավագույն անդամը/ները հիմնատիպային է/են, որի/ոնց շուրջը և կառուցվում է ամբողջ կարգը: Վերջին ժամանակներս լայն տարածում է ստացել նաև *լեզվական գիտակցություն* եզրը: Այն օգտագործվում է լեզվաբանների, հոգեբանների, մշակութաբանների և ուրիշների կողմից, ընդ որում հաճախ այն կիրառվում է որպես գիտակցություն եզրի հոմանիշ: 2000թ.-ին Ե. Ն. Տարասովը տարբերակում է մտցնում *գիտակցություն* և *լեզվական գիտակցություն* եզրերի միջև՝ վերջինս բնորոշելով որպես գիտակցության ձևերի ամբողջություն, որոնք ձևակերպվում են լեզվական միջոցների օգնությամբ՝ բառ, բառակապակցություն, նախադասություն, տեքստ և գուգորդային դաշտեր: Նշենք, որ լեզվական գիտակցությունը, որպես մարդու խոսքային գործունեությունը ապահովող հոգեբանական մեխանիզմ, ուսումնասիրվում է տարբեր տեսակի գուգորդական փորձարկումների միջոցով՝ ազատ, ուղղորդված, շրջայական և այլն:

Զուգորդական փորձարկումը կարող է կիրառվել լեզվաբանության տարբեր բնագավառներում՝ հնարավորություն տալով դուրս բերել տարբեր բառերի իմաստային մերձավորությունը: Նշենք, որ Ի. Դիլը առաջարկում է գուգորդական կապերի նոր ըմբռնում, ինչպիսին է մարդու բառապաշարի կազմակերպումը՝ հիմնվելով անհատի փորձի վրա: Համաձայն հետազոտողի՝ գուգորդումների առաջացման գործընթացը ապահովում է մարդու ճանաչողական գործունեությունը:

Ազատ գուգորդումների մեթոդը պատասխան է տալիս բառերի միջև եղած կապերի սկզբունքների մասին եղած հարցերին և այս կամ այն լեզվակրի գիտակցության մեջ դրանց ունեցած դիրքի մասին (<http://www.refu.ru/refs/29/4971/1.html>, 15.02.2011):

¹ Rosch E., "Cognitive Representations of Semantic Categories", Journal of Experimental Psychology: General, Vol. 104, No.3, (September 1975), pp. 192-233.

Սույն աշխատանքի հիմնական խնդիրն է դուրս բերել *տուն* և *home/house* բառերի զուգորդումները՝ ներկայացնելով ստացված արդյունքները Է. Ռոշի տեսության ներքո: Ուսումնասիրության ժամանակ իրականացրել ենք *ազատ զուգորդումների* փորձարկումը, որի դեպքում փորձարկվողը իր ռեակցիաներում ոչ մի սահմանափակման առաջ չի կանգնում: Փորձարկմանը մասնակցել են 200 լեզվակիր/100 հայախոս, 100 անգլախոս/

Զուգորդական փորձարկման իրականացման գործընթացը. *Տուն* բառի զուգորդումները դուրս բերելու համար փորձարկումն իրականացրել ենք Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, իսկ *home/house* բառերի զուգորդումների դուրսբերմանը մեծապես նպաստել է Facebook սոցիալական ցանցը, որի միջոցով «*home/house բառ-ազդակներին պատասխանեք առաջին 6-7 բառ-ռեակցիաներով*» /What are the first 6-7 associations you make with the words home/house?/ հաղորդագրությունը ուղարկվել է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի 17-23 տարեկան ուսանողների:

Փորձարկվողների ընդհանուր չափանիշները՝ սեռ՝ արական/ 30%/ և իգական /70%/, տարիք՝ 17-23 տարիքային խումբ, մասնագիտություն՝ ուսանողներ:

Անգլախոս փորձարկվողների առանձնահատկությունները՝ ազգություն՝ ամերիկացի, ազգային լեզու՝ անգլերեն, բնակավայր՝ ԱՄՆ, Կալիֆորնիա

Հայախոս փորձարկվողների առանձնահատկությունները՝ ազգություն՝ հայ, ազգային լեզու՝ հայերեն, բնակավայր՝ Հայաստան:

Հավելենք, որ հայախոս փորձարկվողներին առաջադրվել է *տուն* բառ-ազդակին, իսկ անգլախոսներին՝ *home/house* բառ-ազդակներին պատասխանել առաջին 6-7 բառ-ռեակցիաներով: Նշենք ստացված բառ-ռեակցիաներից մի քանիսը՝ *yard, armchair, advice, bed, pet, food, computer, warmth, love, sofa, washing machine, TV set, երեխաներ, արջուկ, հաճելի լույս, ամրություն, աղյուս, քույր, ցանկապատ, շան տնակ, իմ սենյակը, միասնություն* և այլն:

Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, զուգադրվող լեզուներում *ընտանիք*-ը ամենաբարձր հաճախականությունն ունեցող բառ-ռեակցիան է: Նշենք, որ ամենահաճախ հանդիպող բառ-ռեակցիաներից շատերը երկու լեզուներում էլ համընկնում են՝ *family-ընտանիք, warmth-ջերմություն, comfort-հարմարավետություն, love-սեր, rest-հանգստություն, happiness-երջանկություն, peaceful-համերաշխություն, safe/security-ապահովություն*:

աղյուսակ 1

30%	family	68%	ընտանիք
20%	comfort, warmth	35%	ջերմություն
19%	food, safe/security	33%	սեր
18%	love	29%	հանգստություն

10%	kitchen	25%	օրախ
9%	bed	20%	հարմարավետություն
8%	relaxation	19%	համերաշխություն
6%	sofa, shelter	17%	երջանկություն
5%	rest, happiness, mummy, peaceful, TV set, to sleep	16%	երեխաներ
		14%	հարգանք
		11%	փոխըմբռնում, տանիք, ապահովություն

Ուսումնասիրության արդյունքում ստացված բառ-ոճակցիաներում դիտարկվել են շարակարգային զուգորդումների հետևյալ տեսակները՝

1. զոյական /բառ-ազդակ/ - ածական /բառ-ոճակցիա/
home/house - quiet, clean, soft, sacred, hospitable, peaceful, lonely, encouraging (8%)
տուն - մաքուր, մեծ, կարմիր, առանձին (4%)
2. զոյական /բառ-ազդակ/ - բայ /բառ-ոճակցիա/
home/house - to sleep, to belong, to cuddle (3%)
տուն - քնել, հանգստանալ, ապրել, ուտել (4%)
3. զոյական /բառ-ազդակ/ - զոյական /բառ-ոճակցիա/
home/house - carpet, wife, relaxation, warmth, homework, roof, shelter, heaven, husband, faith (89%)
տուն - վստահություն, ծխնելույզ, հզորություն, Նոր Տարի, օթևան, միջավայր, միասնություն, աթոռ, կյանք և այլն (92%)

Ինչպես նախապես նշել էինք, աշխատանքի նպատակն է ներկայացնել զուգորդական փորձարկման արդյունքում ստացված բառ-ոճակցիաները Է. Ռոշի տեսության ներքո: Ինչպես և Է. Ռոշը, մենք նույնպես դիտարկել ենք վերոնշյալ զուգորդումները ռեյտինգային սանդղակի 7 աստիճաններով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր բառ-ոճակցիայի հաճախականությունը ըստ պատասխանների քանակի: Արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը՝

	Ռեյտինգային սանդղակի 7 աստիճանները	
	"Home/house"	«տուն»
1. ամենալավ ներկայացուցիչ	family /30/	ընտանիք /68/
2. լավ ներկայացուցիչ	comfort/warmth /20/	սեր /33/ ջերմություն /35/
3. բավականին լավ ներկայացուցիչ	love/18/ food/ safe/security /19/	օջախ /25 / հանգստություն /29/
4. միջին լավ ներկայացուցիչ	relaxation /8/ bed /9/ kitchen/10/	միասնություն/10/ փոխըմբռնում/ ապահովություն/ տանիք /11/ հարգանք /14/ երեխաներ /16/ երջանկություն /17/

5. բավականին վատ ներկայացուցիչ	happiness/ rest/ mummy/ peaceful/ To sleep/ TV set/ 5/ shelter/ sofa /6/	պաշտպանվածություն /ուրախություն /սիրելի մարդիկ/ հեռուստացույց /5/ մայր / խոհանոց / 7/ բնակա- վայր/ վստահություն/ ծնող /8/
6. վատ ներկայացուցիչ	advice//bedroom//belonging// brightness/childhood//youth//c olors// furniture//computer//roof//stab ility// quiet// wife /2/ armchair//baby//children//frie nds// laughter// memories// my room /3/ dad //parents// pet /4/	ամուսին//պատասխանատվոթ յուն//բարություն//ուժ//ուտելիք/ զեղեցկություն//գույք//գրույք//ա զատություն//իմ սենյակը //սերունդ// ինտերնետ// քուն// քույր//ապաստան//լուսավորու թյուն//հյուրասենյակ//սրբությու ն//համակարգիչ//վարագույր// հաճելի լույս// քաղաք/ /2/ աշխատանք//եղբայր//ննջարա ն//սեփականություն// սենյակ// տաքություն// շենք// շունիկ /3/ ամրություն//բուխարի//ընթրիք/ /խաղաղություն//հավատարմու թյուն//հոգատարություն// հայր// մտերմություն /4/
7. չատ վատ ներկայացուցիչ	carpet//cuddle//protection//po ol// Pittsburgh//pillow//wealth//wa shing machine//wardrobe//value//pic tures// to cuddle// life// tea// joy// blue// to belong /ocean//mountains// mortgage//Madeira//teapot//te am work // swimming// sunshine// soft// sex// saint//lonely// lovely people// laundry//sacred//routine//knife // island//involvement//hospitabl e/ husband//commotion//chores// cinema centre//clean//coffee/ /brothers//calmness//celebrati on// bike//anger//balcony//beach// assurance//yard//adventure// concern//conversation//cozy//c ouch// craziness//curtains//discussion s// health//heaven//homework//ho pe/ /relief//dress//encouraging//fa	երեխայի ճիչ// արդարություն // արքունկ//երաժշտություն//աղյու ս//ճաղեր//ճաշասենյակ//ճոճաթ ոռ//փայտի տուն// բազմոց// //ննջասենյակ//անկողին// գորգ//բարձ// ջահ// փոխվստահություն//անվտան- գություն//դուռ//թթենի//բաղնիք/ /ուտել//բնակարան///հաթոռ/ ուտելիքի բույր // բնօրրան///ուշադրություն ընկերություն// գրքեր// ընտանեկան//միջավայր//ցանկ ապատ//զուգարան//ազնվությո ն//ապավեն//սեջ//ապրել//խա նդ// առողջություն//առանձին// սովորելու վայր/ հարազատ վայր// սոցիալական խումբ// սուրճ//հարազատ միջավայր// տան վարձ// հյուրասիրություն//հաշտեցում/ լույս//համբերություն//լուրթուն //համախմբ-վածություն// լվացարան//համակեցություն// կարմիր/հողաթափ/կացարան/ /հույս//կապ-վածություն//հան գստավայր/տատիկ//հանգստա նալ//ծածկոց//վեճ//վերանորո- գում//ծանրաբեռնվածություն// մանկություն//տոներ//շան տնակ//ծիծաղ//

	cilities// faith//future//God//guest//free dom// Fresno//fireplace//fish/ /flowers /1/	//մեծ//ծխնելույզ//մեկուսարան// կյանք//օդափոխություն//հզոր ություն//մաքուր//քառակուսի//հե ռախում//բար//մահճակալ//հեղի նակություն//օթևան// Նոր Տարի// քնել// միջավայր /1/
--	--	--

Ներկայացնելով տուն և home/house բառ-ազդակների բառ-ոճակցիաները է. Ռոշի ռեյտինգային սանդղակի 7 աստիճաններով՝ առանձնացրել և զուգադրել ենք նաև անգլերենում և հայերենում համընկնող բառ-ոճակցիաները՝ փորձելով դուրս բերել առկա համապատասխանությունները և անհամապատասխանությունները:

Զուգադրվող լեզուների համընկնող բառ-ոճակցիաներում առկա ռեյտինգային սանդղակի աստիճանների համապատասխանություններն են՝

1. անգլերենում և հայերենում ընտանիքը /family/ դիտարկվում է որպես տուն կարգի ամենալավ ներկայացուցիչ, 2. զուգադրվող լեզուներում ջերմությունը /warmth/ համարվում է լավ ներկայացուցիչ, 3. համընկնումներ չեն դիտարկվում սանդղակի երրորդ աստիճանում՝ բավականին լավ ներկայացուցիչներ հատվածում: 4. համընկնումներ չեն դիտարկվում նաև սանդղակի չորրորդ աստիճանում՝ միջին լավ ներկայացուցիչներ հատվածում: 5. ուրախություն, հեռուստացույց և մայր /happiness, TV set, mummy/ բառ-ոճակցիաները՝ որպես վատ ներկայացուցիչներ, համընկնում են, 6. իմ սենյակ, համակարգիչ, սեփականություն, ննջարան և հայր /my room, computer, belonging, bedroom, dad/ բառ-ոճակցիաները՝ որպես վատ ներկայացուցիչներ, համընկնում են:

Հետաքրքիր է այն փաստը, որ զուգորդական փորձարկման արդյունքում որպես բավականին վատ և վատ ներկայացուցիչներ ներկայացված են այնպիսի բառեր, որոնք, ըստ մեզ, պետք է որ գտնվեն ռեյտինգային սանդղակի ավելի բարձր աստիճաններում՝ հայր, մայր, եղբայր, mummy, dad, parents և այլն:

7. Զուգադրվող լեզուներում ռեյտինգային սանդղակի յոթերորդ աստիճանում համընկնում են բարձ, սեքս, վեճ, տոն, սրբություն, սուրճ, մաքուր, առողջություն և զորք /pillow, sex, discussions, celebration, saint/sacred, coffee, clean, health, carpet/ բառ-ոճակցիաները՝ որպես շատ վատ ներկայացուցիչներ: Ուշագրավ է, որ կատարված զուգորդական փորձարկումն արդեն անգլերենի և հայերենի նյութի հիման վրա ևս մեկ անգամ ապացուցեց է. Ռոշի տեսության թեզն այն մասին, որ 1. կարգի առանձնահատկություններն ավելի լավ/հստակ են երևում ստորին մակարդակում, 2. ամենատեղե կատվականը հիմնական մակարդակն է, 3. բարձրագույն մակարդակը ներառում է կարգի բավականին քիչ յուրահատկություններ:

Թվարկենք նաև զուգադրվող լեզուների համընկնող բառ-ոճակցիա-ներում առկա ռեյտինգային սանդղակի աստիճանների անհամապատասխանություններից մի քանիսը՝ 1. *comfort*-լավ ներկայացուցիչ, *հարմարավետություն* միջին լավ ներկայացուցիչ, 2. *love*- բավականին լավ ներկայացուցիչ, *սեր*՝ լավ ներկայացուցիչ, 3. *children*- վատ ներկայացուցիչ, *երեխաներ*՝ միջին լավ ներկայացուցիչ, 4. *bed*-միջին լավ ներկայացուցիչ, *անկողին/մահճակալ*՝ շատ վատ ներկայացուցիչ, 5. *kitchen*- միջին լավ ներկայացուցիչ, *խոհանոց*՝ բավականին վատ ներկայացուցիչ և այլն:

Ամփոփելով նշենք, որ «բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ուսումնասիրությունը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից պարզաբանեց երկու ազգերի տարբեր ճանաչողական ընկալումները՝ կապված *տուն*, *home/house* հասկացությունների հետ: Մեր կողմից իրականացված ազատ զուգորդումների մեթոդը կիրառող փորձը խոսում է այս կամ այն լեզվակրի (սովյալ դեպքում հայախոս և անգլախոս լեզվակիրների) գիտակցության մեջ բառերի ունեցած դիրքի մասին՝ ցույց տալով, որ զուգորդումների առաջացման գործընթացը ապահովում է մարդու ճանաչողական գործունեությունը, իսկ մարդու ճանաչողական գործունեության հիմքում ընկած է մարդու կյանքի փորձը, պատկերացումները, մտածելակերպը, հավատալիքները և, ի վերջո, ազգային պատկանելությունը, բնական վայրն ու մշակույթը: Դրա մասին է վկայում զուգադրվող լեզուներում միևնույն բառ-ազգակի (սովյալ դեպքում *տուն*, *home/house* բառ-ազգակների) միևնույն բառ-ոճակցիայի ռեյտինգային սանդղակի տարբեր աստիճաններում տեղակայված լինելը:

Գրականություն

1. Абрамян К. Ш., Когнитивные отношения в словообразовании (на материале непроеизводных глаголов английского, армянского и русского языков). Автореф. докт. дис., Ереван, 2007
2. Вежицкая А., Семантика, культура и познание: общечеловеческие понятия в культуроспецифических контекстах. Thesis. - Вып. 3. - М., 1993. - С.185-206, [<http://www.philology.ru/linguistics1/wierzbicka-93.htm>]
3. Вежицкая А., Семантические примитивы, 1983 [http://www.kant.narod.ru/anna_w.htm, 15.01.2011]
4. Hipkiss A. R., Semantics defining the discipline. Lawrence Erlbaum associates, publishers Mahwah, New Jersey Hove, UK, 1995, 1-57
5. Rosch E., Cognitive Representations of Semantic Categories, Journal of Experimental Psychology: General, Vol.104, No.3, (September 1975), pp. 192-233
6. Rosch E., Principles of Categorization. University of California, Berkeley, 1978
http://commonweb.unifr.ch/artsdean/pub/gestens/f/as/files/4610/9778_083247.pdf, 20.02.2011